**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**

**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-26/30 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով**

**համացանցային էջերի հոսթինգի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 04.02.2026թ. ժամը 09:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը.**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ Արա Խաչատրյան

Արմենուհի Մաղաքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Շաբոյան

1. **Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**
   1.1. Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**
   2.1. Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|
| 1. | «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ | b2btenders@viva.am |
| 2. | Էլիքս | elxamllc@gmail.com |

3. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**
   3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
   **Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1. Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

| Չափաբաժնի համար | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Վերջին առաջարկ | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | Գին | |
| 1 | 1 | «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ | 180000 | 148500 | 178200 | |
| 1 | 2 | Էլիքս | 180000 | 179000 | 179000 | |

**5. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

5.1. Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 09.10.2026թ.**

**6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

6.1. **«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ի** կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

7.1. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

- **1-ին և չափաբաժնի մասով** ընտրված մասնակից ճանաչել **«ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ** -ին,

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

7.2. **Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել՝**

- Էլիքս-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով,

**8. Գնահատման արդյունքների մասին**

8.1. Հաստատել **1-ին, չափաբաժնի** մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին e-auction համակարգով՝ գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

Գնահատող հանձնաժողով՝

------------------------ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

------------------------ Արա Խաչատրյան

------------------------ Արմենուհի Մաղաթյան

------------------------ Սաթենիկ Շաբոյան /քարտուղար/